

**VII. ՀՀ ԱՎԾ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ
2003թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՁԱՆԱՌՈՒԹՅԱՆ ,
ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐՑՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում 2003թ. ընթացքում զգալիորեն կրճատվել է գրագրության ծավալը (նվազել են հատկապես ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումները):

2003թ. փաստաթղթաշրջանառությունը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում հետևյալ թվային պատկերն է ներկայացնում.

1. Մտից թղթակցություն՝

ա/ ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներ - 100 միավոր,

բ/ գրություններ այլ նախարարություններից (2118 միավոր), տարածքային ստորաբաժանումներից (1082 միավոր), արտասահմանյան երկրներից (1763 միավոր), այդ թվում՝ ԱՊՀ երկրներից (80 միավոր): Ընդամենը մտից թղթակցությունը կազմել է 4963 միավոր (2002թ.-ի 4715 միավորի դիմաց):

Ընդամենը մտից թղթակցություն –5063 միավոր (2002թ.՝ 5148-ի դիմաց),

2. Ելից թղթակցություն՝ 7015 միավոր (2002թ.՝ 6840 միավորի դիմաց)

Ընդհանուր փաստաթղթաշրջանառությունը 2003թ. ընթացքում կազմել է 12078 միավոր (2002թ.՝ 11988 միավորի դիմաց):

Ստացված թղթակցությունը, 2002թ. համեմատությամբ, 2003թ.-ին նվազել է 85 միավորով, ելից թղթակցությունն ավելացել է 175 միավորով:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում ՀՀ ԱՎԾ նախագահի կողմից 2003թ. ընթացքում վերահսկողության է վերցվել 122 փաստաթուղթ և հանձնարարական (ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներ և հանձնարարականներ, արձանագրային հանձնարարականներ, այլ նախարարություններից գրություններ և այլն), որոնք կատարվել են սահմանված ժամկետներում: